ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ..1...

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում 09.03.2011թ. կայացած մարզխորհրդի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Փոխմարզպետ Մ. Առաքելյան
Մարզպետի տեղակալ Ա. Մելոյան
Մարզպետարանի աշխատակազմի տեղակալ Հ. Գևորգյան
ՏԿՆ աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ Ա. Չերչինյան
Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
Մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման մասին
/զեկ.՝ գյուղատնեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/:

2.Համայնքների բյուջեների, սեփական եկամուտների, հողի հարկի արտոնությունների հավաքագրման, աշխատավարձերի նախկին պարտքերի մարման գործընթացի և ֆինանսների բնագավառում օրենսդրական փոփոխությունների մասին
/զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ՝ Ն. Գալստյան/:

3.Բնակչության պետռեգիստրում մարզի երեխաների հաշվառման, դպրոցներում ուսումնական զենք-զինամթերքի պահպանման սենյակների կահավորման հարցում համայնքների օժանդակության մասին
/զեկ.՝ ԿՄՍ վարչության պետ Պ. Համբարձումյան/:

4. <<Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգին հավանություն տալու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակի մասին
/զեկ. ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

5. < Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին> ՀՀ կառավարության 28.10.2010թ. թիվ. 1477-Ն որոշման մասին
/զեկ. ՝ հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. Օհանյան/:

6. Այլ հարցեր և հայտարարություններ:

Մարզխորհրդի նիստի օրակարգը ներկայացրեց << Արագածոտնի մարզպետ պարոն Ս. Սահակյանը:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանը:Նա խոսեց <<Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգին հավանություն տալու մասին> << կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակի մասին:

Նա զեկուցեց գարնան գյուղատնտեսական աշխատանքների մասին:2011թ. նախատեսվում են ջրանցքների վերանորոգման, հակակարկտային կայանների տեղադրման աշխատանքներ:

Նախատեսվում է գարնան սերմնացուի ձեռք բերում գարնանային աշխատանքները ժամանակին սկսելու համար:

Նախատեսվում է 15 հազ. հա. գարնանացան:Խոսվեց այն չափորոշիչների մասին, համաձայն որի համայնքապետերը պետք է տրամադրեն հատկացվող սերմնացուից օգտվողների ճշգրտված ցուցակը: Սերմնացուն պետք է տրվի այն անապահով ընտանիքներին, որոնք չեն կարողացել մշակել իրենց հողը:Համայնքապետերը կարող են ստանալ իրենց անհրաժեշտ քանակը՝ չափորոշիչներին համապատասխան :

Գյուղատնտեսական տեխնիկայի մոտ 70 % -ն է սարքին վիճակում:Կրծողների դեմ պայքար է տարվում թունաքիմիկատների միջոցով: Այդ գործընթացին վերաբերող միջոցառումները շարունակվելու են 2011 թ. գարնանը:

Կան համայնքներ, որոնք << կառավարության կողմից համաֆինանսավորման գումարներ են ստացել ծրագրեր իրագործելու համար: Պետք է կազմել ժամանակացույց, սեղմ ժամկետում այդ գումարները վերադարձնել << պետբյուջե:

Գյուղատնտեսական ներուժի մակարդակը ցածր է, անհրաժեշտ է խոշորացնել գյուղատնտեսական տնտեսությունները:Կարևորվում է գյուղատնտեսական տնտեսությունների խոշորացման խնդիրը՝ նպաստել կոոպերատիվների ստեղծմանը, գյուղատնտեսական տարածքներում արտադրության զարգացմանը: Կարևոր է բազմաբնույթ տեսակների միավորումը՝ ըստ մասնագիտացված գործունեության: Միջոցառումները իրագործվելու են պետության կողմից լիազորված մարմնի կողմից՝մի քանի փուլերով:

1-ին փուլը նախատեսվում է իրագործել 1-3 տարիների ընթացքում:

2-րդ փուլը կիրագործվի 3-5 տարիների ընթացքում:

3-րդ փուլը կիրագործվի 5-10 տարիների ընթացքում:

Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. Գալստյանը խոսեց համայնքների բյուջեների, մասնավորապես սեփական եկամուտների, հողի հարկի արտոնությունների հավաքագրման, աշխատավարձերի նախկին պարտքերի մարման գործընթացի և ֆինանսների բնագավառում օրենսդրական փոփոխությունների մասին:Համայնքների եկամուտների հավաքագրման և պլանային ցուցանիշների համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ամսվա սկզբին արխիվացնել ելակետային թվերը և ճիշտ ներկայացնել:2011թ. հունվար-փետրվար ամիսներին անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի քիչ են հողի հարկեր հավաքվել:Այդ առումով 2011թ. պլանային ցուցանիշների նկատմամբ պետք է լինել ուշադիր:

Որոշ համայնքերում դեռևս կան աշխատավարձի չվճարված պարտքեր:2011թ. կազմվել է ժամանակացույց այն համայնքապետերի հետ, ովքեր ունեն աշխատավարձի չվճարված պարտքեր:Այդ գործընթացը պետք է ավարտվի մինչև 2011թ. առաջին կիսամյակը՝ համաձայն ժամանակացույցի:

Հողի արտոնությունների հետ կապված համայնքապետերը պետք է հաշվետվություն ներկայացնեն սահմանված կարգով և ճիշտ ժամանակին:

Գնումների հետ կապված քաղվածք-պայմանագիր կնքելու ձևանմուշը փոխվել է, այսուհետ պայմանագրերը պետք է կնքվեն նոր ձևանմուշներով:Առաջարկվեց բոլոր համայքներում ստեղծել աուդիտորական հաստիք:

ԿՄՍ վարչության պետ Պ. Համբարձումյանը խոսեց բնակչության պետռեգիստրում մարզի երեխաների հաշվառման, համայնքների դպրոցներում ուսումնական զենք-զինամթերքի պահպանման սենյակների անհրաժեշտության մասին:Դպրոցները տրամադրում են 6-16 տարեկան երեխաների հաշվառմանն անհրաժեշտ տվյալները:1-3 տարեկան երեխաների մասին տվյալներ տրամադրում են ՔԿԱԳ բաժինները:Իսկ 3-6 տարեկան երեխաների հաշվառման հարցում պետք է աջակցեն համայնքապետերը:

Մանկապարտեզները պետք է ունենան համայնքային ոչ առևտրական կազմակերպության կարգավիճակ, գրանցման վկայական և իրենց կանոնադրությունը:Այս ուղղությամբ պետք է օպերատիվ աշխատանք տանել:

Դպրոցներում անհրաժշտ է նորմալ պայմաններ ստեղծել ռազմագիտություն առարկայի ուսուցման համար:Մարզի միայն 25 դպրոցներ ունեն ուսումնական զենք, զինամթերք, այն պահելու սենյակ:Մյուս դպրոցներում ևս պետք է ստեղծվեն նմանատիպ պայմաններ:

ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյանն զեկուցեց, որ ՀՀ արդարադատության նախարարություն պետք է ուղարկվեն ավագանու որոշումները, որոնք պետք է անցնեն փորձաքննություն:Փորձաքննություն չանցած որոշումները <Իրավական ակտերի մասին> օրենքի համաձայն իրավական ուժ չունեն:Եվ համայնքապետերը դրանք կիրարկելու իրավունք չունեն:Հակառակ դեպքում պետք է կրեն քրեական պատասխանատվություն:

Մինչև 2011թ. ապրիլի 15-ը պետք է ներկայացնեն հաշվետվություն իրենց կատարած գործունեության մասին:

Բոլոր համայնքներում պետք է տեսանելի վայրում լինի հայտարարությունների տախտակ:Հայտարարությունների տախտակի վրա պետք է փակցված լինեն համայնքի ավագանու և համայնքապետի նորմատիվ որոշումները, ինչպես նաև այն բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերվում են համայնքին:

Բոլոր համայնքապետերը պետք է մինչև 2011թ. հունիսի 1-ը ավարտեն բնակիչների հասցեավորումը և համապատասխան գրություն ներկայացնեն մարզպետին աշխատանքները ավարտելու վերաբերյալ:

Պետք է ավարտին հասցնել համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների անձնագրերի գործընթացը:

Առևտրի և ծառայությունների առումով համայնքապետերը պետք է ներկայացնեն հաշվետվություն, իսկեն այդ գործընթացը:

Պետք է աղբահանության աշխատանքները կատարել պատշաճ ձևով և ներկայացնել հաշվետվություն: Վերահսկվելու է այդ գործընթացը:<Վարչական իրավախախտումների մասին> օրենքում համայնքում աղբահանությունը չկատարելու համար մարզպետն իրավասու է վարչական տույժի ենթարկել համայնքապետին 150.000 դրամի չափով:Անհրաժեշտ է համայնքում առանձնացնել աշխատակցի, որը կոնկրետ պատասխան կտա համայնքում աղբահանության աշխատանքների կատարման համար:

<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին> ՀՀ կառավարության 28.10.2011թ. թիվ 1477-Ն որոշման մասին զեկուցեց Գ. Օհանյանը:Նա հայտնեց, որ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված են նոր ձևեր, որոնցով կարող են կնքվել վարձակալման պայմանագրերը:Այսուհետև հողերի վարձակալության պայմանագիրը պետք է կնքվի ըստ նոր ձևաչափի:

Հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Դանիելյանը:Նա տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի N922-Ն որոշումը:Հաստատվել է <Խնամակալության և հոգեբարձության մարմինների կանոնադրությունը>:Հանձնարարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ 6 –ամսյա ժամկետում մշակել և հաստատել խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույց և այն տրամադրել խնամակալության և հոգեբարձության մարմիններին:Մարզի համայնքապետերին առաջարկվում է առաջնորդվել այդ կանոնադրությամբ:

Պետռեգիստրում երեխաների հաշվառման կապակցությամբ կարևոր է, որ դպրոցներում և մանկապարտեզներում չընդգրկված բոլոր երեխաների օրինական ներկայացուցիչներին իրազեկելու, անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պատասխանատուն ՏԻՄ-երի ղեկավարներն են, որը բխում է երեխաների շահերից, խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովների կանոնադրության պահանջներից:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ՝

Համայնքապետերին՝

- Կազմել ժամանակացույց և սեղմ ժամկետում ՀՀ պետբյուջե վերադարձնել <Հազարամյակի մարտահրավեր–Հայաստան>ՊՈԱԿ-ի մասով ստացված համաֆինանսավորման գումարները:
- Մինչև տարեվերջ հավաքել հողի հարկը:
- իրենց համայնքների դպրոցներում ստեղծել ռազմագիտության ուսուցմանն անհրաժեշտ պայմաններ:
- Մինչև մայիսի վերջ ներկայացնել հաշվառման ենթակա երեխաների ցուցակը:
- Մինչև 2011թ. հունիսի 1-ը ճշտել հասցեավորման հետ կապված փոփոխությունները:
- Համայնքներում տեղադրված տեղեկատվական տախտակները պարբերաբար թարմացնել ավագանու որոշումներով:
- ՏԿՆ-ից ստացվել է հանձնարարական համայնքների սեփականության հողերի օտարման վերաբերյալ:Ոչ մի համայնքում 100%-ից պակաս հող չպետք է օտարվի:
- Վարձակալման պայմանագրերը պետք է կազմել ըստ նոր ձևաչափի:

Ս. Սահակյան